Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Կատարողական վարույթները կասեցնելու մասին

«05» 01 2022թ. ք. Գորիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Ա. Միրզոյանս ուսումնասիրելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնում հարուցված թիվ 08106992, թիվ 08260065, թիվ 08156356 և թիվ 06860875 կատարողական վարույթների նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ԵԴ/14663/17/21 կատարողական թերթի համաձայն պետք է Գրիգոր Դավթի Օհանյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 3.832.328 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ԵԴ/14663/17/21 կատարողական թերթի համաձայն պետք է Գրիգոր Դավթի Օհանյանից հօգուտ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 2.111.141 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ԵԴ/17538/17/21 կատարողական թերթի համաձայն պետք է Գրիգոր Դավթի Օհանյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 129.971 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ/0710/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Գրիգոր Դավթի Օհանյանից և մյուսներից համապարտության կարգով հօգուտ «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 1.530.132 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Պարտապանից բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Կատարողական վարույթներով վճռների հարկադիր կատարման ընթացքում պարտապան Գրիգոր Դավթի Օհանյանին պատկանող միջոցների վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ միջոցներն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելիի չափով չեն բավարարում պահանջատիրոջ հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հովածների և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 08106992, թիվ 08260065, թիվ 08156356 և թիվ 06860875կատարողական վարույթները 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով այն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ Ա.ՄԻՐԶՈՅԱՆ